“ԱՐՑԱԽԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ” ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՓՈՒԼԻ 30-ԱՄՅԱԿԻՆ

2018 թ. փետրվարի 23-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ “Արցախը հայոց պետականության համար պայքարի քառուղիներում” խորագրով միջազգային գիտաժողով՝ նվիրված Արցախյան շարժման նոր շրջափուլի 30-ամյակին: Այն կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը և Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ): Գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, *Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի պետ տեր* Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, *Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ* Աշոտ Ղուլյանը, *ՀՀ սփյուռքի նախարար* Հրանուշ Հակոբյանը, *ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ* Շավարշ Քոչարյանը, *ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ, գիտնականներ, բուհերի ղեկավարներ, մտավորականներ:*

Գիտաժողովը բացեց ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը*: Արժևորելով Արցախյան շարժումը՝ նա, մասնավորապես, նշեց, որ այն բարձրացրեց մեր ժողովրդի արժանապատվությունը, օրինակ հանդիսացավ բազմաթիվ ժողովրդական շարժումների համար: Գիտաժողովին ընթերցվեց Արցախի Հանրապետության նախագահ* Բակո Սահակյանի *խոսքը, որում, մասնավորապես, նշվում էր, որ արցախցին համախմբեց համայն հայությանը մեկ կարգախոսի շուրջ՝ “Հայը պետք է ապրի իր սեփական հողում, ազատ ու անկախ, շենացնի իր պապերի երկիրը և կերտի սերունդների ապագան”:* Նաթան արքեպիսկոպոսի *առաջարկով գիտաժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին կյանքից հեռացած այն բոլոր նվիրյալների հիշատակը, ովքեր կանգնած են եղել շարժման ակունքներին: Այնուհետև ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ.* Գարեգին Բ *Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը, որում ներկայացվեց արցախցիների ազատագրական պայքարի ոգեշնչող ու կազմակերպիչ Գանձասարի կաթողիկոսության դերը: Ընթերցվեց նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ.* Արամ Ա-ի *հայրապետական օրհնությամբ, քրիստոնեական ջերմ սիրով ու ազգային վառ ապրումներով տոգորված ողջույնի խոսքը: ԵՊՀ ռեկտոր* Արամ Սիմոնյանն *ասաց, որ արցախյան պայքարը ցույց տվեց, որ հայ ժողովուրդն իր միասնության մեջ անսասան է: Ներկաներին ողջունեց նաև*

ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Սուվարյանը, *ով, անդրադառնալով արցախահայության ազատագրական պայքարի պատմությանը, հատուկ արժևորեց Արցախյան շարժման վերջին շրջափուլը, որն ամենևին էլ պատահականություն չէր, այն ունեցել է պատմական ավանդույթներ: ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն* Աշոտ Մելքոնյանը, *ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, հիշեցրեց, որ 30 տարի առաջ՝ 1988 թ. փետրվարի 23-ին, Պատմության ինստիտուտում կոլեկտիվի ժողով հրավիրվեց, որի ժամանակ ընդունվեց մի որոշում՝ գիտության ներկայացուցիչների ողջույնի խոսքը հայ ժողովրդին և պատրաստակամությունը պատմական տեղեկանք ներկայացնել Արցախի հայկականության վերաբերյալ: Այնուհետև ցուցադրվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի բակում հավաքված ժողովրդի առջև 30 տարի առաջ տեսագրված այդ որոշման ներկայացման տեսանյութը:*

Այնուհետև հանդես եկան գիտաժողովի առաջին մասի հիմնական զեկուցողները՝ Մոդեստ Կոլերովը, Ստանիսլավ Տարասովը *և* Աշոտ Մելքոնյանը*:*

"Ռեգնում" տեղեկատվական գործակալության գլխավոր խմբագիր, քաղաքական վերլուծաբան Մոդեստ Կոլերովը *"Ազգային պետություններ" սկզբունքը ստալինյան ԽՍՀՄ-ում" վերնագրով զեկուցման մեջ ասաց, որ "Պատմության մեջ, ցավոք, չկա լիարժեք պատմական արդարություն, բայց կա հավերժ սուրբ պայքար այդ արդարության համար": Անդրադառնալով խորհրդային պատմությանը՝ նա նշեց, որ իշխանության եկած կոմունիստները երկիրը ղեկավարում էին որոշակի սկզբունքներով: Այդ սկզբունքներից էր ազգային պետությունների ստեղծումը յուրաքանչյուր ազգի համար: Դրա նպատակը երկրի սահմաններին ազգային միավորումների տեսքով պաշտպանական վահանների ստեղծումն էր: Ազգային պետություններն ունեին տարբեր մակարդակներ: Կոմունիստների համար կար նաև Կարմիր Արևելքի ծրագիրը և, հետևապես, ԼՂԻՄ-ի ստեղծումը իշխանության համար արտաքին խնդիրների հավասարակշռման գործիք էր, նույնպիսի գործիք էր, օրինակ, Մոնղոլիան, որը դիտվում էր որպես հակակշիռ Չինաստանի ազդեցության ուժեղացման համար: Բանախոսը զուգահեռներ անցկացրեց խորհրդային տարբեր հանրապետությունների՝ (Ուկրաինայի, Բելառուսի) ստեղծման պատմության հետ: Այնուհետև անդրադարձավ մեծ տերությունների շահերի բախմանը Օսմանյան Թուրքիայի և Ռուսաստանի կայսրության ժառանգությանը տիրանալու համար ու վերլուծեց դրա հետևանքները:*

Ռուս վերլուծաբան Ստանիսլավ Տարասովի *զեկուցման թեման էր "Հայաստանի Հանրապետության և Արցախի անվտանգությունը Մեծ Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքականության համատեքստում": Նա ասաց, որ միջազգային գիտաժողովը խնդիրներ վերհանելու լավ հնարավորություն է ընձեռում: Նրա*

խոսքով՝ տարածքը, որտեղ այսօր երեք պետություն կա՝ Հայաստան, Ադրբեջան ու Վրաստան, կայուն սահմաններ չունի: Բանախոսը նշեց, որ դժվար է ասել, թե 5–6 տարի հետո ո՞ր պետության հետ սահմանակից կլինի Հայաստանը, Վրաստանն ընդհանրապես կլինի՞, թե՞ոչ, ի՞նչ սահմաններ կունենա Ադրբեջանը կամ ինչպե՞ս կձևափոխվի Հայաստանի և Թուրքիայի սահմանը: Նա չբացառեց Թուրքիայի սահմանների փոփոխման հնարավորությունը, նշեց, որ անհասկանալի է իր դաշնակցի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը, որը հստակ քայքայիչ բնույթ ունի: Ըստ վերլուծաբանի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը սառեցված վիճակում է, և արտաքին դերակատարներին ձեռնտու չէ այս պահին լուծել այդ հիմնախնդիրը: Իսկ դրա պատճառները, ըստ Ս. Տարասովի, կապված են Մերձավոր Արևելքի հետ: Նա նշեց, որ Ռուսաստանում վատ գիտեն ԼՂ խնդրի գենետիկան, քանզի այն դիտում են ԽՍՀՄ պատմության համատեքստում, մինչդեռ այն շատ ավելի բարդ է: Զեկուցողը նաև դիմեց հայ պատմաբաններին՝ իրենց աշխատանքներն ավելի շատ ռուսերեն ու այլ լեզուներով հրատարակելու կոչով՝ նշելով, որ այլապես առաջանում է տեղեկատվության պակաս, որը փորձում է լցնել Ադրբեջանը:

Աշոտ Մելքոնյանը *հանդես եկավ "Արցախը Հայոց պետականության պատմության հոլովույթում" զեկուցմամբ: Նա հակիրճ ներկայացրեց հայոց պետականության պատմությունը՝ անդրադառնալով հայոց պատմության տարբեր փուլերում Արցախի դերակատարությանը: Նշեց, որ մեր պատմագրությունն այդ առումով բացթողում ունի: Բոլոր դասագրքերում գրված է, որ Բագրատունիների թագավորության անկումից հետո մինչև 1918 թ. մայիսը մենք այլևս չենք ունեցել պետականություն: Դրանով անտեսվում էին այն պետականությունները, որոնք պահպանվեցին Անիի թագավորության անկումից հետո: Շատ դեպքերում երկրի առանձին հատվածների պետականությունը մեզանում ընկալվել է որպես անջատողականություն՝ որպես պետականության տրոհում: Հայոց պետականության պահպանման գործում մեծ է եղել եկեղեցու դերը և պատահական չէ, որ կաթողիկոսը սկսեց կոչվել Ամենայն Հայոց: Բերելով Արցախի մելիքությունների օրինակը՝ բանախոսը հիմնավորեց, որ միգուցե չէր պահպանել պետությունն ամբողջ Հայաստանի տարածքում, բայց առանձին հատվածներ կրել են պետականության բեռը: Արցախը միշտ ներկայացվել է ազատագրական ծրագրերում (Հովսեփ Էմինի, Մովսես Սարաֆյանի) որպես հայոց պահպանված պետականության օրինակ:*

Համլետ Հարությունյանը *հանդես եկավ "Արցախը Անդրկովկասի տարածաշրջանում տերությունների վարած քաղաքականության համատեքստում 1918–1920 թթ." վերնագրով զեկուցմամբ, որում ընդգծեց Արցախի առանցքային դերակատարությունը հայոց պետականության համար պայքարի քառուղինե-*

րում: Եվ դա հատկապես 1918–1920 թթ., երբ կովկասահայության առջև ընտրություն էր դրված՝ կամ մնալ ռուսական կայսրության փլատակների տակ, կամ դիմակայել բոլոր մարտահրավերներին ու պաշտպանել ապրելու իր իրավունքը: Բանախոսը ներկայացրեց Արցախում տիրող իրավիճակը 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած 2 հեղափոխությունների, ինչպես նաև Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ստեղծված ուժերի նոր հարաբերակցության համատեքստում: Դժվարին իրավիճակում Արցախի առաջին (1918 թ. հուլիսի 22–26) ու երկրորդ (1918 թ. հուլիսի 22–26) համագումարներում երկրամասը հռչակվեց անկախ վարչաքաղաքական միավոր և մերժեց ընդունել ադրբեջանական գերիշխանությունը: Դրան հետևեցին թուրք-ադրբեջանական զորքերի մարտական լայնածավալ գործողություններն Արցախում և արցախցիների հերոսական դիմադրությունը: Գերմանիան, իսկ հետո Համաձայնության երկրները, ի դեմս Մեծ Բրիտանիայի, իրենց հետաքրքրություններն ունեին տարածաշրջանում: Նրանք խիստ կարևորում էին Ադրբեջանի դերը, որ հայտնի էր իր հակառուսական գործելակերպով: Դա նպաստավոր դաշտ ստեղծեց Ադրբեջանի կողմից հայկական նոր կոտորածների համար: Սակայն արցախցիների դիմադրությունը խախտեց նվաճողների պլանները: 1919 թ. սեպտեմբերին թատերաբեմում հայտնվեց Խորհրդային Ռուսաստանը: Ադրբեջանին սիրաշահելու քաղաքականությունը շարունակեց նաև քեմալական Թուրքիայի հետ դաշնակցած Խորհրդային Ռուսաստանը:

Հրանտ Աբրահամյանը *“Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացումը” վերնագրով զեկուցման մեջ նշեց որ 1919 թ.օգոստոսի 22-ի Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի միջև կնքված պայմանագրի համաձայն Ղարաբաղը ժամանակավորապես հայտնվել էր Ադրբեջանի կազմում: 1920 թ. մարտի կեսերին Արցախ – Զանգեզուր սահմանին կենտրոնացած 80 հազարանոց ադրբեջանական ուժերը սպառնում էին հայերին նոր կոտորածներով: Ապրիլի 14-ին երկրամասը պաշտպանելու համար Դրաստամատ Կանայանը (Դրոն) մարտական ուժերով մտավ Արցախ: Մի քանի օր անց Նժդեհը Զանգեզուրից իր զորքով նույնպես մտավ Արցախ, Դիզակի շրջան, չեզոքացնելով սպառնացող վտանգը: Վարանդան և Դիզակը հայտարարվեցին Հայաստանի Հանրապետության մաս: Ապրիլի 25-ին արցախահայության 9-րդ համագումարը հռչակեց Արցախի միացումը Հայաստանի Հանրապետությանը: Իրավիճակը, սակայն, փոխվեց Ադրբեջանի խորհրդայնացումից հետո: Նախկին մուսավաթականներն այժմ հանդես էին գալիս բոլշևիկյան կարգախոսներով և ընդունվել էին Կարմիր բանակի շարքերը: Շուտով Կարմիր բանակը մուտք գործեց Արցախ, ցանկացած դիմադրություն դաժանորեն ճնշվում էր: Արյունահեղությունից խուսափելու համար մայիսի 25-ին Դրոն մեկնում է Գորիս: Մայիսի 26-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում*

արցախահայության 10-րդ համագումարն Արցախը հայտարարում է խորհրդային: Արցախցիների հույսերը, որ դա կօգնի միավորվել մայր հայրենիքի հետ, չարդարացան, քանի որ շուտով պարզ դարձավ՝ բոլշևիկներն Արցախը հանձնելու են Ադրբեջանին:

Վահրամ Բալայանը *հանդես եկավ "Ազատագրական պայքարի դրսևորումները ԼՂԻՄ-ում (1920–1940-ական թթ.)" վերնագրով զեկուցմամբ: Բանախոսը նշեց, որ խորհրդայնացումից հետո Արցախը մի քանի անգամ ապստամբել է Ադրբեջանի հայակուլ քաղաքականության դեմ: Առաջինը Թևան Ստեփանյանի գլխավորած ազատագրական շարժումն էր (1918–1921 թթ.), որի ճնշումից հետո պայքարը չդադարեց: 1920-ականների սկզբին արցախահայության ազատագրական պայքարը համակարգում էր 1921 թ. Թավրիզում ստեղծված "Ղարաբաղի ազատագրման միությունը": 1922–1923 թթ. Մարտակերտում ծավալվեց Գ. Դանիելյանի և Մովսես Քոթենի խմբի պայքարը: 1925–1929 թթ. Ջրաբերդում գործում էր մի այլ զինված ջոկատ՝ Սերգեյ Բալայանի գլխավորությամբ: 1928–1929 թթ. Ալեքսանդր Տեր-Սարգսյանի գլխավորությամբ 25 հոգանոց խումբ էր գործում հյուսիսային Արցախում: 1925 թ. Անդրկովկասի կոմկուսի 4-րդ համագումարում, վկայակոչելով այս իրողությունները, ՀամԿ(բ)Կ Հյուսիս-Կովկասյան երկրկոմի առաջին քարտուղար Ս. Օրջոնիկիձեն ստիպված եղավ հայտարարել, որ այդ ամենի պատճառն ադրբեջանցիների վարած քաղաքականությունն է: Հատուկ քննություն անցկացվեց, որի ընթացքում բացահայտվեց Ադրբեջանի վարած խտրական քաղաքականությունը: Միևնույն ժամանակ, 1925–1927 թթ. Արցախի շրջկենտրոններում մասսայական խուզարկություններ և ձերբակալություններ եղան: Չնայած դրան՝ Արցախում դիմադրական շարժումները շարունակվեցին նաև 1930-ական թվականներին:*

Էդիկ Մինասյանն *"Արցախյան շարժման նոր շրջափուլը" վերնագրով զեկուցման մեջ նախ հակիրճ անդրադարձավ արցախահայության պայքարի նախորդ փուլերին, ապա հանգամանորեն խոսեց արցախյան շարժման վերջին փուլի, դրա պատճառների և սկզբնավորման մասին, ներկայացրեց շարժման հիմնական իրադարձությունները թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում: Բանախոսը հատուկ շեշտադրեց Արցախյան շարժման ընթացքում ունեցած ձեռքբերումները: Նախ, ԼՂԻՄ մարզխորհուրդը ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ, առանց վերադաս կուսակցական մարմինների հրահանգի, ինքնուրույն որոշում կայացրեց, փետրվարյան բազմահազարանոց ցույցերը, նաև քաղաքական հստակ պահանջներով գործադուլները առաջինն էին երկրի պատմության մեջ, ի դեմս Ղարաբաղ կոմիտեի՝ հանրապետության բնակավայրերում և հիմնարկներում ստեղծվեցին շարժման կառույցներ, ԼՂՀ խնդիրը մեծ հնչեղություն ձեռք բերեց ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլև միջազգային ասպարեզում:*

Ուշագրավ էր Կարեն Խաչատրյանի “*ԼՂԻՄ-ի կազմավորումը և տարածքային կորուստները (1920–1930-ական թթ.)” վերնագրով զեկուցումը: Բանախոսն ասաց, որ մինչև 1921 թ. կեսերը Լեռնային Ղարաբաղն անկախ վարչատարածքային միավոր էր, ըստ էության, սուվերեն պետական կազմավորում և երբեք չի եղել արհեստականորեն ստեղծված ադրբեջանական հանրապետության մաս: Թեպետ Հայաստանի տարածքներից առաջինը խորհրդայնացավ Լեռնային Ղարաբաղը, սակայն խորհրդային իշխանությունների կողմից երկրամասը 1921 թ. հուլիսի 5-ին նվիրաբերվեց Ադրբեջանին՝ տալով ինքնավար մարզի կարգավիճակ: Ադրբեջանի իշխանությունները փորձեցին դիմադրել և խուսափել ինքնավարության տրամադրումից: Միայն 1923 թ. հուլիսի 7-ի որոշմամբ Ադրբեջանը ստիպված եղավ ինքնավարություն տրամադրել մարզին: 1921 թ. հուլիսի 5-ի որոշմամբ ինքնավարությունը պետք է տրվեր ամբողջ Ղարաբաղին, որի տարածքը կազմում էր 8000 քառակուսի մետր, սակայն 1930-ական թվականների վերջերին Ղարաբաղին մնաց ընդամենը 4400 քառակուսի մետր: Բացի այդ, ստեղծվեց արհեստական մի միավորում՝ Կարմիր Քուրդիստանը, որով Հայաստանն ու Արցախն արհեստականորեն բաժանվեցին: Հետագայում Կարմիր Քուրդիստանը վերացավ (դա այսօրվա Քաշաթաղն է): Արցախյան շարժման ընթացքում, փաստորեն, հաջողվեց վերադարձնել այդ կորցրած տարածքները, ուստի դրանք բռնազավթված տարածքներ չեն:*

Ալեքսանդր Մանասյանը *հանդես եկավ “Արցախյան հիմնախնդրի լուծման իրավական հիմքերը” վերնագրով զեկուցումով: Արցախյան հակամարտության լուծման ուղիների քննարկման ժամանակ հաճախ, ասաց նա, Արցախի պատմական պատկանելիության հարցը չի դիտարկվում: Քաղաքական իրականությունն այնպիսին է, որ մինչև XX դարասկիզբը տարածաշրջանում չի եղել “Ադրբեջան” անունով պետություն: 1920 թ. Խորհրդային Ադրբեջանը հիմնվել է որպես ոչ ազգային հանրապետություն (այդ տեսակետից այն միակն է եղել ԽՍՀՄ-ում) և չի համապատասխանում Մ. Կոլերովի բերած շրջանակին: Այնուհետև ստեղծված Ղարաբաղի ինքնավար մարզը նույնպես այդ բանաձևից շեղում էր, քանի որ Ղարաբաղի ամբողջ հայությունը դրանում չընդգրկվեց: Ընդ որում՝ Ղարաբաղում կային պետականության բոլոր ատրիբուտները, որոնք պահանջվում էին ինքնավարություն տալու համար: Բանախոսը, հանգամանորեն վերլուծելով խորհրդային և միջազգային իրավական փաստաթղթերը՝ հիմնավորեց, որ իրավական լուրջ հիմքեր կան հիմնախնդրի լուծման համար: Իսկ դա նախ ժողովրդի ինքնորոշման իրավունքն է, ապա՝ այն իրողությունը, որ իր ստեղծման օրվանից Ադրբեջանը ցեղասպան պետություն է: Ադրբեջանն իր իրավական կապերը ԼՂՀ-ի և Նախիջևանի հետ կորցրել է 1991-ի օգոստոս-հոկտեմբերին նախկին Ադրբեջանական ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու ակտով:*

Լիլիթ Զաքարյանն *“Անկախության գաղափարի արմատավորումը հայ հասարակության գիտակցության մեջ Արցախյան շարժման ընթացքում” վերնագրով զեկուցման մեջ ներկայացրեց, թե ինչպես 1988 թ. փետրվարին սկսած Արցախյան շարժման ընթացքում հնարավոր դարձավ վերականգնել կորցրած անկախությունը: Շարժումը նպաստեց ազգային ինքնագիտակցության աճին, ազգային գաղափարի շուրջ ազգի համախմբմանը: Շարժման սկզբում անկախության հարց չէր դրվում, քանի որ ԽՍՀՄ-ը համարվում էր հայ ժողովրդի գոյատևման միակ երաշխիքը: Անկախության գաղափարի արմատավորմանը նպաստեցին հետևյալ հանգամանքները. ԽՍՀՄ-ի ներսում հայ ազգի ապահովվածության առասպելի վերացումը, որը հետևանք էր Ադրբեջանում կազմակերպված հայերի ջարդերի և դրանց անպատժելիության, արտաքին ապահովության զգացողության կորուստը, որը խորհրդահիրանական սահմանի խախտման հետևանք էր, ԽՍՀՄ-ում ԶԼՄ-ներում ծավալվող հակահայկական հիստերիան: Դրան նպաստեցին նաև երկրի սոցիալ-տնտեսական դժվարությունները, որոնք կապված էին անընդհատ կրկնվող շրջափակումների և որպես հետևանք՝ վառելիքաէներգետիկ ճգնաժամի ու պարենային դժվարությունների հետ, էկոլոգիական ծանր դրությունը և այդ հարցի անընդհատ շահարկումը, երկրաշարժի գոտում վերականգնողական աշխատանքների դանդաղկոտությունը: Որոշակի դեր ունեցան նաև սոցիալիզմին հակադրվող միջազգային ուժերի կողմից ազգային հարցի շահարկումները: 4-ամսյա պայքարի արդյունքում Արցախյան շարժման ղեկավարների մի մասը եկավ անկախության գաղափարի՝ որպես զարգացման այլընտրանքային տարբերակի գիտակցմանը: 1988 թ. սեպտեմբերի 9-ին բազմահազարանոց բազմությունն առաջին անգամ վանկարկեց “Անկախություն” բառը:*

Վարդան Դևրիկյանի *“Արցախյան շարժման և պատերազմի ռազմաքաղաքական փուլերը” վերնագրով զեկուցման մեջ 1988–1994 թթ. Արցախյան պայքարը ներկայացվեց հետևյալ պարբերաբաժանմամբ.*

1. 1988–1989 թթ. ազգային վերազարթոնքի և քաղաքական փաստաթղթերի ու որոշումների շրջան, երբ Արցախի և Խորհրդային Հայաստանի կողմից ընդունվում էին համապատասխան որոշումներ, որոնց Ադրբեջանի իշխանությունները դեմ էին արտահայտվում:

2. 1990–1991 թթ. սաֆոնովա-պոլյանիչկոյական ռեժիմի բռնությունների և հայ բնակչության բռնի տեղահանման շրջան:

3. 1991 թ. աշնանից 1994 թ. մայիսյան զինադադար՝ Արցախյան պատերազմի շրջան:

Փաստագրական տվյալներով և ականատեսի վկայությամբ բանախոսը հիմնավորեց, թե այս երեք փուլից յուրաքանչյուրը ինչպես արտահայտվեց կրա-

կային հզորությունների և զինտեխնիկայի կիրառման, Գորիս–Լաչին–Ստեփանակերտ ճանապարհի գործարկման, Ստեփանակերտի օդանավակայանի և Արցախի կենսապահովման ներքին ցանցի գործունեության վրա: Զեկուցման հիմքում ընկած էր այն դրույթը, որ Արցախյան պատերազմի փուլերը և ընդլայնման ընթացքը պայմանավորված չէր միայն հակամարտության ներքին զարգացմամբ, այլ ուղիղ համեմատական էր ԽՍՀՄ քայքայմանը, որի արդյունքում երկրամասից դուրս բերվեցին ԽՍՀՄ ներքին զորքերը, Ստեփանակերտի գունդը և Հադրութի սահմանապահ ուղեկալը: Ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում նորահռչակ հանրապետությունը միայնակ մնաց Ադրբեջանի դեմ ու տնական մարտերով նվաճեց իր անկախության իրավունքը:

Արծրուն Հովհաննիսյանի *“Հայ ռազմարվեստը Արցախյան պատերազմում”* վերնագրով զեկուցման մեջ ներկայացվեց ֆիդայական ջոկատներից կանոնավոր բանակ անցնելու հետագիծը: Բանախոսը նշեց, որ բանակի անհրաժեշտությունը ի հայտ եկավ ինքնապաշտպանական տեղային մարտերի հենց սկզբից: Շուշիից Ստեփանակերտի անխնա ռմբակոծությունն ապացուցեց, որ անհրաժեշտ է մաքրել թևերն ու թիկունքը: Ռազմական գործողությունների որոշման կայացման և պլանավորման աշխատանքներն իրականացվում էին ԼՂՀ ՊՈՒ շտաբում: 1992 թ. մարտից սկսեցին համալիր աշխատանքներ՝ մշակվեց միասնական պլան, հակառակորդի կրակային խոցման պլանավորում, կազմակերպվեց հետախուզությունը: Ռազմական գործողությունը սկսելուց առաջ ուժերի և միջոցների միջին հարաբերակցությունը եղել է ամբողջ ճակատում 1:2,6 ի օգուտ հակառակորդի, իսկ զինամթերքով՝ ավելի մեծ: Շուշիի և Լաչինի գործողությունները դարձան ֆիդայական պայքարի գագաթնակետը, բայց պայքարը շարունակելու համար նոր ձևեր էին հարկավոր: 1992 թ. հունիսի 20-ին անցկացվեց մասնակի զորահավաք, որին ենթակա էին 18–40 տարեկան տղամարդիկ, ինչպես նաև հատուկ պատրաստություն ունեցող 19–30 տարեկան կանայք (սա եզակի դեպք էր հայոց պատմության մեջ): 1992 թ. օգոստոսի 15-ին ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտեն: Իրականացվեց ԶՈՒ կառուցվածքային վերակազմավորում: 1993 թ. պատերազմում արմատական բեկում եղավ: Հայկական ուժերը միջոցների սակավության խնդիրը լուծեցին խառը զրահախմբերի և զորքերի խուսավարման խնդիրների միջոցով: Կիրառվեց կառավարվող ապակենտրոնացման մոդելը:*

ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐՅԱՆ